Հավելված
ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2019 թվականի դեկտեմբերի 25-ի
N518Ն որոշման

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ (ՕՖԵՐՏԱ)
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՄԵԾԱԾԱԽ ՇՈՒԿԱՅԻ

Շուկայի օպերատորը, Համակարգի օպերատորը, Հաղորդողը, Բաշխողը, Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրողը՝ (այսուհետ՝ միասին ԷՄՇ ծառայություններ մատուցողներ) մի կողմից, և ԷՄՇ առևտրի բոլոր մասնակիցները՝ մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք), այլ օրենքների, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հաստատած՝ էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոններով և էլեկտրաէներգետիկական շուկայի հաղորդման ցանցային կանոններով (այսուհետ՝ միասին Շուկայի կանոններ) և Հանձնաժողովի այլ իրավական ակտերով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

ԳԼՈՒԽ 1 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, Կողմերը պարտավորվում են ԷՄՇ-ում իրենց գործունեությունն իրականացնել (կատարելով դրա էությունը կազմող փոխադարձ պարտավորություններն ու օգտվելով համապատասխան իրավունքներից), ներառյալ, սակայն չսահմանափակվելով՝
   1) ԷՄՇ-ում առևտուր իրականացնելու նպատակով՝ ԷՄՇ առևտրի մասնակիցները Շուկայի կանոններով սահմանված կարգով պարտավորվում են ստանձնել հաշվեկշռման պատասխանատվության կարգավիճակ և դրան համապատասխան կնքել Գործարքներ և կատարել կնքված Գործարքները,
   2) Շուկայի օպերատորը պարտավորվում է կազմակերպել ԷՄՇ-ի գործունեությունը, ներառյալ սույն պայմանագրին ԷՄՇ մասնակիցների միանալն ու նրանց հաշվառումը,
   3) Համակարգի օպերատորը, Շուկայի օպերատորը, Բաշխողը, ինչպես նաև Հաղորդողը պարտավորվում են մատուցել համապատասխանաբար՝ էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի, էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի, էլեկտրական

էներգիայի բաշխման, էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայություն, իսկ յուրաքանչյուր ԷՄՇ առևտրի մասնակից պարտավորվում է վճարել իրեն մատուցված ծառայությունների դիմաց,

4) Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրողը պարտավորվում է մատուցել հաշվեկշռման ծառայություն՝ Հաշվեկշռման շուկայում իրականացնելով դրա համար անհրաժեշտ էլեկտրական էներգիայի առուվաճառք:

ԳԼՈՒԽ 2 ԿՈՂՄԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. **ԷՄՇ առևտրի մասնակիցներն Օրենքի**, **իրենց լիցենզիայի**, **Շուկայի կանոնների և սույն պայմանագրի համաձայն պարտավոր են՝**

1) գրանցվել ՇԿԾ-ում և ստանձնել հաշվեկշռման պատասխանատվության կարգավիճակ,
2) էլետրական էներգիա գնելու, ներկրելու, ինչպես նաև ծառայություններ ստանալու նպատակով՝ բացառությամբ Երաշխավորված մատակարարի, Շուկայի օպերատորին ներկայացնել բանկային երաշխիք,
3) ԿՈՒՊ բաղադրիչում և ՕԱՇ-ում էլեկտրական էներգիայի առևտրի նպատակով ներկայացնել Հայտեր,
4) կնքել էլեկտրական էներգիայի առևտրի վերաբերյալ պայմանագրեր (Գործարքներ),
5) ընդունել և ՕՐԱ ընթացքում առաջնորդվել Համակարգի օպերատորի կողմից առաջարկված Գործարքների տեղաբաշխման տարբերակով,
6) ԷՄՇ ծառայություն մատուցողներին վճարել մատուցված ծառայությունների դիմաց,
7) անհաշվեկշռույթների արդյունքում առաջացած էլեկտրական էներգիայի ավելցուկը վաճառել, իսկ պակասորդը գնել ՀԾՄ-ից,
8) ընդունել ու հաստատել Շուկայի օպերատորի կողմից կազմած վճարման ենթակա էլեկտրական էներգիայի և մատուցված ծառայությունների վերաբերյալ ակտերն, ինչպես նաև ԷՄՇ մասնակիցների կողմից ներկայացված հաշվարկային փաստաթղթերը,
9) Համակարգի օպերատորին ներկայացնել ԷՀՏՀ-ի պլանավորման համար անհրաժեշտ տեղեկատվությունը,
10) Վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակներում գործել Համակարգի օպերատորի կարգավարական հրահանգներին համապատասխան,
11) ապահովել այլ պարտականությունների կատարումը:

3. **ԷՄՇ առևտրի մասնակիցներն Օրենքի**, **իրենց լիցենզիայի**, **Շուկայի կանոնների և սույն պայմանագրի համաձայն իրավունք ունեն՝**
   1) ԷՄՇ-ում Գործարքի կողմ հանդիսացող ԷՄՇ առևտրի մասնակիցներից պահանջել վճարել Գործարքների հիման վրա իրականացված էլեկտրական էներգիայի առևտրի դիմաց,
   2) արտահանել և ներկրել էլեկտրական էներգիա,
   3) բացառությամբ ԿԷԱ կայանների, Երաշխավորված մատակարարի, Հաղորդողի և Բաշխողի՝ դուրս գալ ԷՄՇ-ից,
   4) իրականացնել այլ իրավունքներ:
4. **Շուկայի օպերատորն Օրենքի**, **լիցենզիայի**, **Շուկայի կանոնների և սույն պայմանագրի համաձայն պարտավոր է՝**
   1) իրականացնել ԷՄՇ մասնակիցների ՇԿԾ մուտքի, դրանից դուրս գալու հետ կապված գործառույթներ,
   2) իրականացնել ԷՄՇ առևտրի մասնակիցներին հաշվեկշռման պատասխանատվության կարգավիճակի տրամադրման և փոփոխման հետ կապված գործառույթներ,
   3) շահագործել և սպասարկել ՇԿԾ-ն,
   4) ապահովել ՇԿԾ-ում արտացոլված տեղեկատվության գաղտնիության պահպանումը,
   5) ՇԿԾ-ում ամրագրել ԷՄՇ մասնակցի՝ էլեկտրական էներգիա գնելու, էլեկտրական էներգիա ներկրելու և ծառայություններ ստանալու առավելագույն թույլատրելի սահմանաչափը,
   6) գործելով բենեֆիցիարի անունից երաշխիք տված բանկին ներկայացնել երաշխիքով դրամական գումար վճարելու մասին գրավոր պահանջ՝ նշելով պրինցիպալի բանկի հաշվի համարը, որին ենթակա է փոխանցման դրամական գումարը,
   7) բանկային երաշխիքը վերադարձնել այն ներկայացրած ԷՄՇ առևտրի մասնակցին՝ նշելով դրա նկատմամբ իրավունքներից հրաժարման մասին,
   8) գրանցել ԷՄՇ մասնակիցների Հայտերը և հաշվառել Գործարքները,
   9) կազմակերպել ՕԱՇ-ի բնականոն աշխատանքը, այդ թվում ՕԱՇ քլիրինգը,
   10) հաշվառել ԷՄՇ առևտրի մասնակցի կողմից գնված և վաճառված էլեկտրական էներգիայի քանակը,
   11) ՇԿԾ-ի միջոցով իրականացնել ՀԱՇ-ում առաջացած անհաշվեկշռույթների հաշվարկներ,
   12) ՇԿԾ-ի միջոցով կազմել վճարման ենթակա էլեկտրական էներգիայի և մատուցված ծառայությունների վերաբերյալ ակտեր և ներկայացնել ԷՄՇ մասնակիցների հաստատմանը,

13) համակարգել էլեկտրական էներգիայի միջպետական առևտրի իրականացման գործընթացը,
14) հավաքագրել Հաղորդման և Բաշխման ցանցերի միջև տեղակայված Առևտրային հաշվիչների ցուցմունքները,
15) իրականացնել ԷՄՇ-ի արդյունավետ և բնականոն գործունեության համար անհրաժեշտ այլ գործառույթներ:

5. **Շուկայի օպերատորն Օրենքի**, **իցենզիայի**, **Շուկայի կանոնների և սույն պայմանագրի համաձայն իրավունք ունի՝**
   1) Կողմերից պահանջել վճարել մատուցված ծառայությունների դիմաց,
   2) Մերժել ՇԿԾ-ում ԷՄՇ առևտրի մասնակցի գրանցումը, ԷՄՇ-ից դուրս գալու դիմումը, Որակավորված սպառողի կարգավիճակի տրամադրումն, ինչպես նաև ԷՄՇ մասնակցի հաշվեկշռման պատասխանատվության կարգավիճակի տրամադրումը կամ դրա փոփոխումը,
   3) կատարել էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի ծառայությունից այլ գործառույթներ:

6. **Համակարգի օպերատորն Օրենքի**, **լիցենզիայի**, **Շուկայի կանոնների և սույն պայմանագրի համաձայն պարտավոր է՝**
   1) պլանավորել էլեկտրաէներգետիկական համակարգի հաշվեկշիռը,
   2) կանխատեսել էլեկտրաէներգետիկական համակարգի բեռը՝ համակարգի հաշվեկշռման հետ կապված իր պարտականությունները կատարելու նպատակով: Նման կանխատեսման ժամանակ Համակարգի օպերատորը հաշվի է առնում ԷՄՇ մասնակիցների կողմից տրամադրված կանխատեսումները,
   3) ապահովել էլեկտրաէներգետիկական համակարգի անվտանգ և հուսալի աշխատանքը,
   4) Գործարքների տեղաբաշխման հիման վրա իրականացնել համակագի հուսալիության և անվտանգության ցուցանիշների գնահատում,
   5) կառավարել Համակարգային ծառայությունների մատուցումը,
   6) կանխատեսել Հաղորդողի կորուստների համար անհրաժեշտ էլեկտրական էներգիայի քանակը և այդ մասին ծանուցել Հաղորդողին և Շուկայի օպերատորին,
   7) համակարգել էլեկտրական էներգիայի միջպետական առևտրի իրականացման գործընթացը,

8) գրավոր տեղեկացնել ՀԾՄ-ին և Շուկայի օպերատորին էլեկտրական էներգիայի փոխհոսքերը սկսելու, ընդհատելու, վերսկսելու և դադարեցնելու մասին,
9) ապահովել ՇԿԾ-ում արտացոլված տեղեկատվության գաղտնիության պահպանումը,
10) իրականացնել այլ գործառույթներ, որոնք անհրաժեշտ են էլեկտրաէներգետիկական համակարգի անվտանգ և հուսալի աշխատանքի համար:

7. **Համակարգի օպերատորն Օրենքի**, **լիցենզիայի**, **Շուկայի կանոնների և սույն պայմանագրի համաձայն իրավունք ունի՝**
   1) Կողմերից պահանջել վճարել մատուցված ծառայությունների դիմաց,
   2) ՕՐԱ պահանջարկի և առաջարկի հաշվեկշռման նպատակով ՀԾՄ-ին տալ կարգավարական հրահանգներ,
   3) առաջարկել ՀՊԿԻ և ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակիցներին վերանայել Գործարքների տեղաբաշխումը, երբ վերջիններիս կողմից առաջարկվող տարբերակը թույլ չի տալիս ապահովել համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշները և դրանք հնարավոր չէ Հաղորդման ցանցային կանոններով սահմանված կարգով կարգավորել ՀԾՄ-ի միջոցով,
   4) Գործարքների տեղաբաշխման փոփոխությունը անհրաժեշտ համարելու դեպքում՝ ՇԿԾ-ի միջոցով ԷՄՇ առևտրի մասնակցին ուղարկել Գործարքների տեղաբաշխման իր առաջարկվող տարբերակը՝ համապատասխան հիմնավորումներով,
   5) հայտարարել Վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակ,
   6) Վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակներում ԷՄՇ մասնակիցներին տալ կարգավարական հրահանգներ,
   7) կատարել էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայությունից բխող այլ գործառույթներ:

8. **Հաղորդողն Օրենքի**, **լիցենզիայի**, **Շուկայի կանոնների և սույն պայմանագրի համաձայն պարտավոր է՝**
   1) ԷՄՇ առևտրի մասնակիցներին մատուցել հաղորդման ծառայություն,
   2) ապահովել Հաղորդման ցանցում գտնվող հաշվառման համալիրների անխափան աշխատանքը,
   3) իրականացնել էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայությունից բխող այլ գործառույթներ:

9. **Հաղորդողն Օրենքի լիցենզիայի**, **Շուկայի կանոնների և սույն պայմանագրի համաձայն իրավունք ունի՝**
   1) Հաղորդման ցանցի կորուստների և սեփական կարիքների փոխհատուցման նպատակով էլեկտրական էներգիա գնել ԷՄՇ-ից,
   2) Կողմերից պահանջել վճարել մատուցված ծառայությունների դիմաց,
   3) իրականացնել այլ իրավունքներ:
10. **Բաշխողն Օրենքի**, **լիցենզիայի**, **Շուկայի կանոնների և սույն պայմանագրի համաձայն պարտավոր է՝**
   1) ԷՄՇ առևտրի մասնակիցներին մատուցել բաշխման ծառայություն,
   2) գրանցել ԷՄՇ մասնակիցների՝ Բաշխման ցանցին միացված Հաշվառման համալիրների տվյալների, այդ թվում՝ առևտրային և վերստուգիչ հաշվիչների ցուցմունքները,
   3) ապահովել գրանցված տվյալների լիարժեքությունը և հասանելիությունը Շուկայի օպերատորի համար՝ իրական ժամանակում էլեկտրական էներգիայի հաշվառման ավտոմատացված համակարգի (ԷՀԱՀ), ՇԿԾ-ի կամ այլ կիրառվող ծրագրային փաթեթների միջոցով,
   4) իրականացնել էլեկտրական էներգիայի բաշխման ծառայությունից բխող այլ գործառույթներ:
11. **Բաշխողն Օրենքի**, **լիցենզիայի**, **Շուկայի կանոնների և սույն պայմանագրի համաձայն իրավունք ունի՝**
   1) Բաշխման ցանցի կորուստները և սեփական կարիքները փոխհատուցելու նպատակով էլեկտրական էներգիա գնել ԷՄՇ-ում,
   2) Կողմերից պահանջել վճարել մատուցված ծառայությունների դիմաց,
   3) իրականացնել այլ իրավունքներ:
12. **ՀԾՄ-ն իր լիցենզիաների**, **Շուկայի կանոնների և սույն պայմանագրի համաձայն պարտավոր է՝**
   1) մատուցել հաշվեկշռման ծառայություն՝ կատարելով դրա համար անհրաժեշտ էլեկտրական էներգիայի առուվաճառք,
   2) ՇԿԾ-ում հրապարակել ՕՐԱ իր կողմից հաշվեկշռման նպատակով էլեկտրական էներգիայի վաճառքի գինն Առևտրային բոլոր ժամանակահատվածների համար, եթե այն ցածր է Հանձնաժողովի կողմից սահմանած ՀԾՄ առավելագույն գնից,
   3) ենթարկվել Համակարգի օպերատորի՝ ՕՐԱ պահանջարկի և առաջարկի հաշվեկշռման նպատակով տրված կարգավարական բոլոր հրահանգներին,

4) ապահովել էլեկտրական էներգիայի փոխհոսքերի իրականացումը ՀԱԻՐ ուղղությամբ՝ Հանձնաժողովի տրամադրած էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայի, ինչպես նաև ՀԱԻՐ փոխհոսքերի պայմանագրի հիման վրա,
5) Վթարային և անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակում իրականացնել ՀԱԻՐ կամ ՀԱՎՐԱ ուղղություններով փոխհոսքերը,
6) ապահովել այլ պարտականությունների կատարումը:

13. **ՀԾՄ-ն իր լիցենզիաների, Շուկայի կանոնների և սույն պայմանագրի համաձայն իրավունք ունի՝**
    1) ԷՄՇ-ում էլեկտրական էներգիա գնել՝ սեփական արտադրության էլեկտրական էներգիայով պայմանագրային պարտականությունների կատարումը չկարողանալու դեպքում,
    2) արտահանել անհաշվեկշռույթների արդյունքում ԷՄՇ մասնակիցներից գնված էլեկտրական էներգիան և ներկրել էլեկտրական էներգիա,
    3) ԷՄՇ առևտրի մասնակիցներից պահանջել վճարել Հաշվեկշռման շուկայում վաճառված էլեկտրական էներգիայի դիմաց,
    4) իրականացնել այլ իրավունքներ:
14. Սույն պայմանագրի 1)-րդ կետի 1-ից 2-րդ ենթակետերով սահմանված իրավունքները ՀԾՄ-ն կարող է իրականացնել սույն պայմանագրի 1)-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պարտականությունների առաջնահերթ կատարման պայմանով:

ԳԼՈՒԽ 3 ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄԸ

15. ԷՇՄ-ում մատուցվող ծառայությունները, ինչպես նաև ԷՄՇ-ում գնված էլեկտրական էներգիան ԷՄՇ մասնակիցների կողմից ենթակա է վճարման՝ Շուկայի կանոններով սահմանված կարգով:
16. ԷՄՇ-ում մատուցվող ծառայությունների, ինչպես նաև գնված էլեկտրական էներգիայի դիմաց վճարների չափերը սույն պայմանագրի շրջանակում Կողմերն ընդունում են՝
    1) Հանձնաժողովի կողմից սահմանված սակագներին հավասար՝ բացառությամբ սույն կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված դեպքերի,
    2) Կողմերի համաձայնությամբ սահմանված, եթե՝
        ա. տվյալ ծառայության, ինչպես նաև տվյալ վաճառողի էլեկտրական էներգիայի համար Հանձնաժողովի կողմից սակագին չի սահմանվել,
        բ. Կողմերը սահմանել են սակագնից պակաս չափ (ընդ որում նման համաձայնությունները չեն կարող կրել խտրական բնույթ այլ ԷՄՇ մասնակիցների նկատմամբ),

3) Շուկայի կանոնների համաձայն հաշվարկված՝ ՕԱՇ-ում, ինչպես նաև ՀԱՇ-ում էլեկտրական էներգիայի առևտրի դեպքերում:

17. Սույն պայմանագրի շրջանակում Կողմերը պարտավորվում են լրիվ ծավալով և Շուկայի կանոններով սահմանված ժամկետներում կատարել բոլոր վճարումները, ներառյալ Շուկայի կանոններով սահմանված կարգով կնքված Գործարքների ու ստորագրված փաստաթղթերի հիման վրա, որից հետո միայն ձեռնարկել հնարավոր տարաձայնությունների լուծման ուղղությամբ գործողություններ:
18. ԷՄՇ-ում էլեկտրական էներգիա գնելու, ներկրելու, ինչպես նաև ծառայություններ ստանալու նպատակով ԷՄՇ առևտրի մասնակիցները, բացառությամբ Երաշխավորված մատակարարի, Շուկայի օպերատորին ներկայացնում են Հայաստանի Հանրապետությունում գործող որևէ առևտրային բանկի կողմից տրամադրված երաշխիք՝ Շուկայի կանոններով և սույն պայմանագրով սահմանված կարգով:
19. Երաշխիք տված բանկն ԷՄՇ առևտրի մասնակցի (պրինցիպալի) դիմումի համաձայն գրավոր պարտավորություն է ստանձնում պրինցիպալի պարտատիրոջ հանդեպ, պրինցիպալի կողմից Շուկայի կանոններով սահմանված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում՝ վերջինիս պարտատիրոջ՝ բենեֆիցիարի անունից հանդես եկող Շուկայի օպերատորի կողմից ներկայացված գրավոր պահանջի հիման վրա, անվիճելի և անառարկելի կարգով պահանջում նշված ԷՄՇ մասնակցի հաշվեհամարին վճարել դրամական գումար՝ երաշխիքի գումարի սահմաններում:
20. Սույն պայմանագրի գործողության ընթացքում Շուկայի օպերատորը գործում է բենեֆիցիար հանդիսող ԷՄՇ առևտրի մասնակցի անունից: Այդ նպատակով Շուկայի օպերատորը պարտավորվում է անվճար, բենեֆիցիարի անունից և նրա հաշվին կատարել երաշխիք տված բանկին երաշխիքով դրամական գումար վճարելու մասին գրավոր պահանջ ներկայացնելու հետ կապված անհրաժեշտ գործողություններ:
21. ԷՄՇ առևտրի մասնակցը պարտավոր է սույն պայմանագրի 20-րդ կետով նախատեսված իրավաբանական գործողությունները կատարելու համար Շուկայի օպերատորին տալ լիազորագիր:
22. Երաշխավորված մատակարարը վճարումներն ապահովելու նպատակով բացում է Հատուկ հաշիվ (հաշիվներ) և ներկայացնում Հանձնաժողովի հետ համաձայնեցված բանկային երաշխիք՝ Շուկայի կանոններով սահմանված կարգով և չափերով:

ԳԼՈՒԽ 4 ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

23. Սույն պայմանագրի կատարման շրջանակում Կողմերի միջև միմյանց տրամադրման ենթակա ցանկացած և բոլոր տեղեկությունները փոխանցվում (հրապարակվում) են Շուկայի կանոններով սահմանված կարգով:
24. Սույն պայմանագրի կատարման շրջանակում Կողմերի կողմից տրամադրման ենթակա տեղեկատվությունը չներկայացնելու, կամ ուշացնելու, կեղծ կամ թերի տեղեկատվություն ներկայացնելու դեպքերում ցանկացած Կողմ պատասխանատվություն է կրում պատճառված վնասների համար:
25. Սույն պայմանագրի կատարման կապակցությամբ Կողմերին հայտնի դարձած ողջ տեղեկատվությունը նրանց կողմից կարող է օգտագործվել բացառապես սույն պայմանագրի կատարմանն ուղղված նպատակներով:

ԳԼՈՒԽ 5 ՎԹԱՐԱՅԻՆ ԿԱՄ ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԻՐԱՎԻՃԱԿ

26. Հաղորդման ցանցային կանոններով սահմանված դեպքերում, երբ հայտարարվել է վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակ ԷՄՇ մասնակիցները գործում են բացառապես Համակարգի օպերատորի կարգավարական հրահանգներով: Վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակի ամբողջ ժամանակահատվածում Գործարքների հիման վրա ստանձնած պարտավորություններն ամբողջությամբ դադարում են և դրանց խախտման համար Շուկայի կանոններով սահմանված պատասխանատվության միջոցները չեն կիրառվում:
27. Վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակներում էլեկտրական էներգիայի վաճառքն իրականացվում է Հանձնաժողովի կողմից Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրողի համար սահմանած առավելագույն գնով, բացառությամբ այն կայանների, որոնց համար Հանձնաժողովը սահմանել է սակագին: Այդ կայանների դեպքում էլեկտրական էներգիայի վաճառքն իրականացվում է Հանձնաժողովի սահմանած սակագնով: Նույն ժամանակ էլեկտրական էներգիայի գնումն իրականացվում է փաստացի ձևավորված՝ էլեկտրական էներգիայի վաճառքի միջին կշռված գնով:
28. Համակարգի օպերատորի կողմից Վթարային կամ անհաղթահարելի իրավիճակի ավարտի և Շուկայի օպերատորի կողմից առևտրի վերսկսման ժամկետի հայտարարումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, Շուկայի օպերատորը՝ համագործակցելով Համակարգի

օպերատորի հետ, ԷՄՇ մասնակիցների և Հանձնաժողովի քննարկմանն է ներկայացնում Վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակի ԷՄՇ մասնակիցների կողմից փաստացի մատուցված ծառայությունների և , ինչպես նաև փաստացի առաքված (գնված) էլեկտրական էներգիայի արժեքի վերաբերյալ իր հաշվարկները (այսուհետև՝ ՎԱԻ հաշվարկ)՝ համաձայն սույն պայմանագրի 27-րդ կետի:

29. Սույն պայմանագրի 28-րդ կետի համաձայն Շուկայի օպերատորի կողմից ՎԱԻ հաշվարկը ստանալուց 3 աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովը և ԷՄՇ մասնակիցները Շուկայի օպերատորին գրավոր ներկայացնում են դրա վերաբերյալ իրենց եզրակացությունները: ՎԱԻ հաշվարկի արդյունքների հետ համաձայն լինելու դեպքում Շուկայի օպերատորն այն ներբեռնում է ՇԿԾ, իսկ վեճերի և տարաձայնությունների դեպքում ԷՄՇ մասնակիցները ղեկավարվում են սույն Պայմանագրով և Շուկայի կանոններով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 6 ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

30. Սույն պայմանագրից (ներառյալ սույն պայմանագրի 17-րդ կետ, սակայն դրանով չսահմանափակվելով), ինչպես նաև Գործարքներից բխող իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում յուրաքանչյուր Կողմ լրիվ ծավալով հատուցում է մյուս Կողմերին պատճառված իրական վնասները, եթե վնասների հատուցման ավելի մեծ չափ նախատեսված չէ սույն պայմանագրով և Շուկայի կանոններով:
31. Կողմը պատասխանատվություն չի կրում, եթե ապացուցում է, որ պատշաճ կատարումն անհնար է եղել ֆորս մաժորի հետևանքով: Ֆորս մաժոր համարվող իրավիճակները, ինչպես նաև դրանց կիրառման կարգը սահմանվում են Շուկայի կանոններով:
32. ՇԿԾ-ի միջոցով կնքված Գործարքներից ծագող պարտավորությունների համար Շուկայի Օպերատորը պատասխանատվություն չի կրում, բացառությամբ եթե ՇԿԾ-ն շահագործել է Շուկայի կանոնների պահանջների խախտմամբ:

ԳԼՈՒԽ 7 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

33. Սույն պայմանագիրը հանդիսանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 444-րդ հոդվածի իմաստով միանալու պայմանագիր (օֆերտա), որին էլեկտրական էներգիայի արտադրության, մատակարարման, երաշխավորված մատակարարման, մեծածախ առևտրի լիցենզիա ունեցող ցանկացած անձ, ինչպես նաև ցանկացած որակավորված սպառող, ով Օրենքին և Շուկայի կանոններին համապատասխան իրավունք ունի մասնակցելու ԷՄՇ-ին (այսուհետ՝

Ակցեպտանտ), իրավունք ունի միանալ սույն պայմանագրին՝ սույն պայմանագրով և Շուկայի կանոններով սահմանված կարգով:

34. Յուրաքանչյուր ԷՄՇ առևտրի մասնակցի համար սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Շուկայի կանոններով սահմանված կարգով Շուկայի օպերատորի կողմից ՇԿԾ-ում հաշվառելու պահից և գործում է մինչև Շուկայի կանոններով սահմանված կարգով տվյալ մասնակցի ԷՄՇ-ից դուրս գալը:
35. Բոլոր ԷՄՇ մասնակիցների կողմից ստորագրված ու Շուկայի օպերատորի կողմից հաշվառված ակցեպտները կազմում են սույն պայմանագրի անբաժանելի մաս:

ԳԼՈՒԽ 8 ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

36. Սույն պայմանագրում հասկացություններն ունեն Օրենքով և Շուկայի կանոններով իրենց տրված նշանակությունը, եթե այլ բան ուղղակիորեն նախատեսված չէ սույն պայմանագրով:
37. Օֆերտայի նոր ձև սահմանելու, դա փոփոխելու դեպքում սույն պայմանագրի պայմանները համարվում են համապատասխանեցված՝ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված կարգով և ժամկետներում:

ԳԼՈՒԽ 9 ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

38. Սույն պայմանագրի կատարման առնչությամբ ԷՄՇ մասնակիցների միջև առաջացող բոլոր վեճերն ու տարաձայնությունները կարգավորվում են բանակցությունների միջոցով:
39. Վեճը (տարաձայնությունը) կողմերի համաձայնությամբ չկարգավորվելու դեպքում 15 օրվա ընթացքում ցանկացած կողմ կարող է դիմել Հանձնաժողով՝ վերջինիս իրավասությունների շրջանակում վիճարկվող հարցերը լուծելու խնդրանքով, ինչպես նաև վեճի լուծումը հանձնել իրավասու դատարանին, եթե Կողմերի համաձայնությամբ չի որոշվել գործը հանձնել արբիտրաժի լուծմանը:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շուկայի օպերատոր
Համակարգի օպերատոր
Հաղորդող
Բաշխող
Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրող

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2019 **թվականի դեկտեմբերի** 25-**ի** N518-**Ն որոշմամբ սահմանված պայմանագրի օրինակելի ձևի**

ԱԿՑԵՊՏ

Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասին պայմանագրին միանալու

_____, ի դեմս _____,
ակցեպտանտի անվանումը

ով գործում է _____ հիման վրա

ԷՄՇ-ին միանում է որպես _____

Արտադրողների համար

Հանձնաժողովի կողմից տրված լիցենզիայի № ____

Տրման ամսաթիվը ____ թ.

Լիցենզավորված գործունեության տեսակը _____

տեղակայման հասցեն _____

Հաշվառման համալիրների տվյալները ըստ յուրաքանչյուր հաշվառման կետի _____,

դրվածքային հզորությունը _____,

լիցենզիայով սահմանված թույլատրելի հզորությունը _____,

յուրաքանչյուր հաշվառման կետում առավելագույն թույլատրելի հզորությունը _____:

Որակավորված սպառողների համար

սպառման համակարգի տեղակայման հասցեն _____,

Հաշվառման համալիրների տվյալները ըստ յուրաքանչյուր Հաշվառման կետի _____,

սպառման համակարգի առավելագույն հզորությունը _____,

յուրաքանչյուր հաշվառման կետում առավելագույն հզորությունը _____:

Մատակարարների համար

Գործունեության տարածք

ԷՄՇ առևտրի մասնակցին հասանելի հատվածներն ԷՄՇ-ում

1. ուղիղ պայմանագրերի

   ա. կարգավորված բաղադրիչ ☐

   բ. չկարգավորված բաղադրիչ ☐

   գ. երկարաժամեկտ բաղադրիչ ☐

2. ՕԱՇ ☐

3. ՀԱՇ ☒

ԷՄՇ առևտրի մասնակցի իրավասու ներկայացուցիչ՝

Պաշտոն (կարգավիճակ)_____

Ստորագրություն_____

___-_____-20___թ.

ստորև ներկայացնում եմ տեղեկատվություն էլեկտրաէներգիայի սահմանազատման (առաքման), հանձնման, հաշվառման կետերի մասին.

1. _____ -ի սահմանազատման (առաքման) կետերն են՝
2. Առևտրային (վերահսկիչ) հաշվառքի կետերն են՝
3. Առևտրային (վերահսկիչ) հաշվիչների, չափիչ տրանսֆորմատորների տվյալներն են՝

տեղակայման վայրը	Հաշվիչ				չափիչ տրանսֆորմատոր						ԷՄՇ առևտրի մասնակցի սեփականությունը հանդիսացող կամ իր կողմից տնօրինվող տարածքներում առևտրային հաշվիչների և չափիչ տրանսֆոր-
					Հոսանքի			Լարման			
	տեսակը, գործարանային համարը, կնիքի տեսակը, համարը	թույլատրելի հոսանքը (Ա)	անվանական լարումը (Վ)	հաջորդ պլանային ստուգաչափման ամիսը և տարեթիվը	տեսակը, գործարանային համարը, սպառողի կնիքի տեսակը, համարը	ճշտություն դասը	տրանսֆորմացիայի գործակիցը	տեսակը, գործարանային համարը, սպառողի կնիքի տեսակը, համարը	ճշտություն դասը	տրանսֆորմացիայի գործակիցը	

											մատոր-ների ամբողջա-կանության պահպան-ման պատաս-խանատու կողմը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12

Որակավորված սպառողի համար

ստորև ներկայացնում եմ տեղեկատվություն տեխնոլոգիական և (կամ) վթարային հզորությունների վերաբերյալ

Առավելագույն թույլատրելի հզորությունը	**Տեխնոլոգիական հզորությունը**	**Վթարային հզորությունը**	**Տեխնոլոգիական գործընթացի (ցիկլի) տևողությունը**	**Վթարային հզորության ապահովման համար անհրաժեշտ ժամանակը**
կՎտ	կՎտ	կՎտ	Ժամ	Ժամ

1. Վթարային և (կամ) տեխնոլոգիական հզորություններ

N	Սնող կենտրոն	Սնող գիծ	Սնող գծի բեռը, *կ Վտ*	Վթարային ամրագրում			Տեխնոլոգիական ամրագրում			Այլ հզորություն		Ենթասպառող	
				էլեկտրա-ընդունիչներ, որոնց էլեկտրամատակարարման սահմանափակումը կարող է հանգեցնել	սնող գծի վրա վթարային հզորությունը, *կՎտ*	սնող գիծ, որի վրա տեղափոխվում է վթարային հզորությունը	էլեկտրա-ընդունիչներ, որոնց էլեկտրամատակարարման սահմանափակումը կարող է հանգեցնել	սնող գծի վրա տեխնոլոգիական հզորությունը, *կՎտ*	սնող գիծ, որի վրա տեղափոխվում է հզորությունը	հզորությունը, *կՎտ*	օրական էլեկտրասպառումը, *կՎտժ*	Ընդհանուր բեռը, կՎտ	տեխնոլոգիական և վթարային ամրագրված հզորություն, կՎտ

				մարդկանց կյանքի և շրջակա միջավայրի համար իրական ու անխու-սափելի վտանգի			մարդկանց կյանքի և շրջակա միջավայրի համար իրական ու անխու-սափելի վտանգի						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
ընդ.													

2. Հզորություն, որը ենթակա է անջատման

N	սնող կենտրոն	սնող գիծ	սնող գծի բեռը, *կՎտ*	սնող գծի վրա տեխնոլոգիական և վթարային ամրագրված հզորությունների գումարը, կՎտ	սնող գիծ, որի վրա է տեղափոխվում ամրագրված հզորությունը	անջատման ենթակա հզորությունը, *կՎտ*	նշումներ
1	2	3	4	5	6	7	8
ընդ.							

3. Հզորություն, որը ենթակա չէ անջատման մինչև տեխնոլոգիական գործընթացի տևողության և վթարային հզորության ապահովման համար անհրաժեշտ ժամանակահատվածի ավարտը

N	սնող կենտրոն	սնող գիծ	առավելագույն հզորությունը սնող գծի վրա, *կՎտ*	վթարային ամրագրված հզորությունը, *կՎտ*	տեխնոլոգիական ամրագրված հզորությունը, *կՎտ*	նշումներ
1	2	3	4	5	6	7
ընդ.						

ԷՄՇ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ՝

ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ _____
ՀՀ _____
ՀԵՌԱԽՈՍ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ N
ՂԵԿԱՎԱՐ
_____

(ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ)